

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի շնորհավորանք- ուղերձը Սևանի պետական քոլեջի հիմնադրման 50-ամյակի առթիվ

Հարգարժան տիկնայք և պարոնայք

Հարգելի հրավիրյալներ

Այսօր բոլորիս մեկ հարկի տակ միավորել է Սևանի պետական քոլեջի հիմնադրման կեսդարյա հոբելյանը, որը շատ սևանցիների համար առավել հարազատ և ընդունելի է «տեխնիկում» բառով: Անկախ ժամանակի պարտադրած բառային փոփոխությունից՝ այս կրթական հաստատությունը բոլոր ժամանակներում հավատարիմ է եղել իր որդեգրած առաքելությանը:

50 տարին ընդունված է համարել մարդու կյանքի լավագույն կեսը, արված գործերի, տեսածի ու ապրածի, կենսափորձի կուտակման լավագույն ժամանակահատվածը:

Հաստատությունների պարագայում հինգ տասնամյակը պատկառելի է, երբ համեմատում ես նմանատիպ առավել երիտասարդ հաստատությունների հետ, սակայն միևնույն ժամանակ կենսագրության առաջին հատորն է, որոշ դեպքերում՝ երկար ու ծիգ ճանապարհի միայն սկիզբը:

ՀՀ կրթության համակարգը մեր անկախության անցած 25 տարիների ընթացքում ամենափոփոխված համակարգերից է: Անկախ փոփոխումներից՝ կրթության նպատակը հստակ է՝ ծառայել անհատին, հասարակությանը և տնտեսությանը:

50 տարի առաջ հիմնադրված տեխնիկումի և այսօր էլ իր կրթադաստիարակչական առաքելությունը շարունակող քոլեջի անցած ճանապարհը և մեր համաքաղաքացիների, և հանրապետության կրթական ոլորտի պատասխանատուների աչքի առաջ է:

Անկախ ժամանակի վայրիվերումներից՝ ի պատիվ քոլեջի բոլոր ժամանակների տնօրենների և աշխատակազմերի՝ այս կրթական հաստատությունը մնաց իր բարձրության վրա, չփակեց իր դռները պատանիների ու աղջիկների առջև, ավելին՝ դարձել է արժեհամակարգ ստեղծող կրթական միջավայր, ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակելու լավագույն հարթակ:

Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին քոլեջի նկատմամբ հանրային հետաքրքրությունը մեծացել է, որը արդյունք է կրթական բարեփոխումների, ոլորտի նկատմամբ նոր մոտեցումների:

Անշուշտ, այդ բարեփոխումները կյանքի են կոչվում ի դեմս տնօրեն Ռուբիկ Գևորգյանի և նրա ղեկավարած աշխատակազմի նվիրումի ու պատասխանատու աշխատանքի շնորհիվ, որի վավերագիրը Սևանի ու տարածաշրջանի պատանիների ու աղջիկների՝ հենց այս կրթօջախին նախապատվություն տալն է:

Ես հավատում եմ, որ Սևանի պետական քոլեջը, որը և քաղաքում և տարածաշրջանում միակն է, ստեղծած լավագույն ավանդույթների, կրթական ու մասնագիտական գործում ունեցած իր անուրանալի տեղի ու դերի շնորհիվ դեռ երկար ճանապարհ ունի անցնելու:

Հարգելի ներկաներ

Հոբելյանական տոնի առթիվ ընդունեք իմ, համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու շնորհավորանքներն ու բարեմաղթանքները:

Օրը հիրավի տոնական է, որը նաև հիշողությունների, անցած ու ներկա հաջողությունների և հաղթանակների, ինչու չէ, նաև դժվարությունների, սակայն այդ ամենը պատվով հաղթահարած քայլերի հանրագումարն է: Թող հոբելյանական այս օրը դառնա նաև կրթության որակի և բարելավմանն ուղղված գաղափարների սկիզբը՝ ծնունդ տալով նոր ծրագրերի ու ձեռնարկների:

Այս տոնական պահին ցանկանում եմ, որ Սևանի պետական քոլեջի բոլոր ժամանակների կոլեկտիվները դառնան լավագույն ավանդույթների կրողն ու շարունակողը՝ իրենց 50-ամյակին գումարելով նոր ու փառավոր տասնամյակներ, իսկ քոլեջի յուրաքանչյուր շրջանավարտ գնա դեպի աշխատաշուկա հիմնարար գիտելիքներով, լինի պահանջված ու սպասված:

Շատ եմ կարևորում նաև, որ քոլեջը իր կրթադաստիարակչական աշխատանքներին համահունչ ունենա շենքային լավագույն պայմաններ, ժամանակակից նյութատեխնիկական բազա:

Պետական քոլեջի ամենօրյա աշխատանքը համակարգող բոլոր աշխատակիցներին մաղթում եմ առողջություն, երկարակեցություն, բեղմնավոր ու արգասաբեր աշխատանք, քոլեջի պատիվը բարձր պահող ու քոլեջը ներկայանալի դարձնող շրջանավարտներ:

Շնորհակալություն ուշադրության համար: